ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

Ծրագրի մասին

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ապահովել հանրային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման փաստահենք և մասնակցային գործընթացը: Ծրագիրն իրականացնում է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպությունը՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» հասարակական կազմակերպությունների (ՀԿ) գործընկերությամբ:

Սույն զեկույցը հրապարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է հեղինակը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

Մասնակցային ժողովրդավարության դիմակայունության ամրապնդումը

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ավտորիտար արտաքին միջավայրում գտնվող երկրում ժողովրդավարության պաշտպանության հնարավորությունները՝ մասնավորապես ապատեղեկատվությանը, հակաժողովրդավարական խոսույթներին, խտրականության քարոզին հակազդելու, հանրային և այլ լրատվամիջոցների միջոցով իրազեկության մակարդակի բարելավման, հանրային քննարկումների, ուսումնական ծրագրերի միջոցով: Թեմայի ընտրությունը պայմանավորված է թե՛ առհասարակ ապատեղեկատվության, խտրականության քարոզի և ժողովրդավարության վարկաբեկման այլ եղանակների շարունակաբար աճող վտանգավորությամբ՝ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովվող լրացուցիչ հնարավորությունների պայմաններում, թե՛ նմանատիպ փորձերին դիմակայելու անհրաժեշտությամբ՝ այդ թվում քաղաքացիական հասարակության ջատագովության և այլ գործունեության միջոցով:

Կատարված հետազոտությունն անդրադառնում է, մասնավորապես, հետևյալ խնդիրներին.
1. Ովքե՞ր են շահագրգռված ժողովրդավարության վարկաբեկմամբ, և որոնք են դրա մեթոդները:
2. Որո՞նք են պետական քաղաքականության արդյունքում ի հայտ եկող խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները:
3. Քաղաքականության մշակման համար պատասխանատուների, փորձագետների և քաղաքացիական հասարակության հնարավոր անելիքները:
4. Որոշ եվրոպական երկրների փորձը և հայաստանյան իրավիճակի հետ կապը:
Հետազոտությունը կիրառում է բովանդակային վերլուծության ու դիսկուրսի վերլուծության մեթոդները՝ հիմնվելով հրապարակված հոդվածների, հարցազրույցների, հրապարակային ելույթների և այլ նյութերի վրա, ինչպես նաև կիրառում է պաշտոնական տեղեկություններ և նախկինում կատարված որոշ հայաստանյան ու արտասահմանյան հետազոտությունների արդյունքներ: Մասնավորապես, ավտորիտար դրսևորումներին ու դրանց նպաստող միջավայրին, ինչպես նաև դրանց հակազդելու փորձին և լավագույն պրակտիկային անդրադառնալու նպատակով ուսումնասիրվել է որոշ ԵՄ անդամների և այլ երկրների փորձը: Տարբեր շահառուների տեսակետները, մասնագիտական կարծիքներն ու մտահոգություններն ուսումնասիրելու և լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով հետազոտության շրջանակում նաև կազմակերպվել է առցանց հարցում՝ 17 մասնակիցների, այդ թվում՝ պետական պաշտոնյաների, մեդիափորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, ներգրավմամբ, ինչպես նաև երեք անհատական հարցազրույց պաշտոնյաների հետ:
Իրազեկության բարելավման, հանրային քննարկումների և ուսումնական ծրագրերի ընդլայնման, նաև օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի միջոցով կարգավորման հնարավորությունների մասին առաջարկներ նախապատրաստելու նպատակով ուսումնասիրվել են միջգերատեսչական համակարգման ու համագործակցության զարգացման հնարավորությունը՝ պետական գերատեսչությունների, կրթական հաստատությունների և այլ մարմինների ներգրավմամբ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և փորձագետների հետ համագործակցության զարգացման հնարավորությունները:

Հիմնվելով վերոնշյալի վրա, նաև հաշվի առնելով առկա վտանգները, դրանց հակազդելու հնարավոր գործիքակազմը, և առհասարակ՝ տեղեկատվական անվտանգությունը բարելավելու կարիքը, մշակվել են հասարակության տարբեր շերտերի տեղեկացվածությանը նպաստող քաղաքականության մի քանի առաջարկներ: Մասնավորապես, հաշվի առնելով նաև Հայաստանի վերաբերյալ տեղեկացվածության պակասը, իսկ մյուս կողմից՝ ավտորիտարիզմի և կեղծիքների առաջխաղացմամբ ակներևաբար շահագրգռված օտարերկրյա շրջանակների առկայությունը, ծրագիրը նաև հակիրճ անդրադառնում է հանրային դիվանագիտությանն առնչվող խնդիրների և արտաքին քաղաքականության հարցերում քաղաքացիական հասարակության ներգրավման հնարավորություններին:

Ազգային և ավանդական արժեքների խնդրի շահագործումը հակաժողովրդավարական քարոզչությունում

Այս խնդրի առկայությունը հանրային դիսկուրսում կարելի է նկատել առնվազն 1996 թվականից ի վեր, երբ Հայաստանը Եվրոպայի խորհրդին անդամակցելու հայտ ներկայացրեց: Մասնավորապես, ի հայտ էր եկել միջազգային չափանիշներին համապատասխան ստանձնած որոշ պարտավորությունների կատարմանն ընդդիմանալու երևույթը. այդ չափանիշներն ու դրանց ակունքում եղած արժեքները քարոզչությունը հռչակում էր «ավանդական» կրոնական համոզմունքներն ուրանալու՝ այսպես կոչված «աղանդավորականության», ինչպես նաև սեռական այլասերվածությունների տարածման սկբնաղբյուր:

Նման քարոզչության ուղղվածությունը՝ միակողմանի քաղաքական կողմնորոշման հետևանքները հաղթահարելու, արտաքին քաղաքականությունը դիվերսիֆիկացնելու փորձերի դեմ, պարբերաբար ուժեղանում կամ թուլանում էր՝ կախված լինելով ընթացիկ պահի քաղաքական նպատակահարմարությունից: Դրա ինտենսիվ շրջաններից էր 2010-2013 թթ.՝ Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների ընթացքում, այնուհետև՝ Ասոցացման համաձայնագրի ստորագրումից հրաժարվելու և Մաքսային միությանն անդամակցելու մասին նախագահ Ս. Սարգսյանի որոշումից հետո առկա էր քարոզչության որոշակի թուլացման շրջան, հետո՝ դարձյալ ինտենսիվացում՝ Ուկրաինայում Եվրոմայդանից ու ռուսական ագրեսիայի սկզբից հետո, և դարձյալ՝ 2015 թ. սկզբին Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի Երևանում կայացած նիստին ընդառաջ, և այդպես շարունակ:

Կարելի է վերհիշել, մասնավորապես, երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշ պարտավորությունների ստանձնման դեմ քարոզչությունը, որով խնդիրը կապվում էր մանկապղծության հետ. քաղաքական գործիչներից ոմանք այն մեկնաբանում էին որպես օտարերկրացիների կողմից որդեգրումն ու հետագա սեռական շահագործումն օրինականացնելու փորձ: Քարոզչական այս խոսույթի կապը ռուսական սկզբնաղբյուրների հետ նկատելի է. մասնավորապես, Նորվեգիայում ծնողական իրավունքներից զրկված և արտաքսված Ռուսաստանի քաղաքացի Իրինա Բերգսետի օրինակից, որի պնդումները լայնորեն տարածվում էին հեռուստատեսության և պետության կողմից վերահսկվող ռուսական այլ լրատվամիջոցների կողմից:[1]

Ի. Բերգսետի միջոցով քարոզչական խոսույթներ ներդնելու փորձեր էին կատարվել տարբեր երկրներում. այսպես, նրա տեսակետները հայտնվել էին դավադրապաշտական նյութերի

[1] Ирина Бергсет, лидер движения "Русские матери", 02.04.2015, https://graniru.org/people/1791/

տարածմամբ աչքի ընկնող, հիմնականում չեխական և սլովակական լսարաններին ուղղված կայքում,[2] որի անգլերեն տարբերակում առկա նյութերից աչքի է ընկնում ամերիկացի նախկին պաշտոնյա Փոլ Քրեյգ Ռոբերտսի Ռուսաստանի ագրեսիան արդարացնող հարցազրույցը.[3] նույն անձի տեսանյութերը ռուսերեն թարգմանությամբ ակտիվորեն տարածվում էին նաև Հայաստանում՝ սոցցանցերի միջոցով: 2014 թ. մոլդովական կայքում հիշատակվել էր Ի. Բերգսետի պնդումը Եվրոպայում իբր գոյություն ունեցող զոոֆիլներին սպասարկելու համար անառականոցների մասին:[4] Սա լուսանցքային գործիչների պնդումները հետագայում քարոզչական նպատակներով ավելի լայնորեն կիրառելու օրինակներից է. 2020 թ. նմանատիպ պնդմամբ հեռուստատեսությամբ հանդես եկավ արդեն ՌԴ Պետդումայի պատգամավորներից մեկը:[5] Կարելի է նշել, ի դեպ, որ ծայրահեղական գաղափարները կամ անհեթեթ պնդումները լուսանցքից դուրս բերելու և անգամ պետական քարոզչությունում օգտագործելու օրինակները Ռուսաստանում բավական շատ են:[6]

2013 թ., երբ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից ներկայացվեց խտրականության դեմ օրենսդրական նախագիծը, Հանրային խորհրդի Կրոնի ենթահանձնաժողովի կողմից այն սեռական փոքրամասնությունների կենսակերպի հետ կապելը բավական հատկանշական էր. «անհերքելի իրականություն է, որ նշված օրինագծով հիմք է դրվում Հայաստանի Հանրապետությունում անբարոյության և այլասերվածության օրինականացմանը: …օրինականացնելու է մեր հայրենիքում սեռական փոքրամասնությունների արմատավորումն ու նրանց կենսակերպի քարոզչության տարածումը… վերջնական բարոյազրկումը, որն անխուսափելի է միասեռականության օրինականացման դեպքում»:[7]

Բավական հայտնի օրինակներից է նաև «Ծնողական կոմիտեի», «Երևանի գեոպոլիտիկ ակումբի» և մի շարք այլ կազմակերպությունների ժամանակին վարած քարոզչությունը «ներմուծված արևմտյան այլասերվածության» դեմ և հօգուտ եվրասիական ինտեգրման, քանի որ, իրենց պնդմամբ, Ռուսաստանն, ի հակադրումն Արևմուտքի, «ոչ ավանդական արժեքներ և անբարոյականություն» չէր խթանի: «Երևանի գեոպոլիտիկ ակումբի» կողմից կատարված որոշ պնդումներ, օրինակ, այն, որ «առկա է բախում աշխարհաքաղաքական բևեռների՝ Արևմուտքի և Ռուսաստանի Դաշնության ու իր դաշնակիցների միջև… Ներկայումս միայն այս արևելյան բլոկն է այս կամ այն կերպ մարտահրավեր նետում ապահումանիզացման արժեքներին»,[8] համահունչ են ոչ միայն տվյալ պահին՝ 2015 թ. տարածված, այլևս ներկայումս էլ՝ Ռուսաստանի կողմից ծավալված ռազմական ագրեսիայի պայմաններում լայնորեն տարածվող քարոզչական խոսույթներին:

---

[2] Տե՛ս https://sk.ynterview.com/irina-bergsetova

[3] Paul Craig Roberts: From Third World War will again be blamed Germany, 20.03.2014, https://www.ynterview.com/interview/paul-craig-roberts-for-third-world-war-will-be-again-blamed-germany

[4] Ecology.md, Irina Bergset povestește despre zoobordeluri în Europa și practica totală de circumcizie în Statele Unite ale Americii (Video), 06.02.2014, https://ecology.md/md/page/irina-bergset-povesteste-despre-zoobordeluri-in-europa-si-practica-totala-de-circumcizie-in-statele-unite-ale-americii-video/feed

[5] Lenta.ru, Депутат Госдумы в прямом эфире заявил о созданном в Дании «борделе» с черепахами, 22.09.2020, https://lenta.ru/news/2020/09/22/zoobordel/

[6] Grigoryan A., The war in Ukraine and historical revisionism, *New Eastern Europe*, 23.05.2022, https://neweasterneurope.eu/2022/05/23/the-war-in-ukraine-and-historical-revisionism/

[7] Հանրային խորհրդի Կրոնի ենթահանձնաժողովի հայտարարությունը, Առավոտ առցանց, 03.06.2013, https://www.aravot.am/2013/06/03/250473/

[8] Как живёт Армения (Познавательное ТВ, Арман Бошян), 01.02.2015, https://www.youtube.com/watch?v=1dG9S9U4TUw

Այս համատեքստում հատկանշական է նաև արդեն 2018 թ. ի վեր՝ «Թավշյա հեղափոխությանը» հաջորդած շրջանում, Ստամբուլյան կոնվենցիայի, Լանզարոտեի կոնվենցիայի, «սորոսականների» (ի դեպ, Ջ. Սորոսի անունը համապատասխան համատեքստում հիշատակվել էր նաև Փ.Ք. Ռոբերթսի վերը հիշատակված հարցազրույցում, իսկ մի շարք ավտորիտար պետություններում այն շահարկվում է կառավարական մակարդակով. Հունգարիայի օրինակին դեռևս կանդրադառնանք) և որոշ այլ խնդիրների շուրջ բարձրացված քարոզչական աղմուկը:
Արդեն 44-օրյա պատերազմին հաջորդած շրջանում քարոզչության օրինակներից կարելի է հիշատակել սահմաններին առկա լարվածության օգտագործումը՝ անվտանգությունը ժողովրդավարությանն ու ինքնիշխանությանը հակադրելու նպատակով: Դրա օրինակներից է 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախորդած ընտրարշավի ընթացքում նախկին նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռ. Քոչարյանի պնդումը, որ ԵՄ-ի 2,6 մլրդ. եվրոյի օժանդակության փաթեթն իբր «ուղղված է Ռուսաստանի դեմ», ու արդեն հետընտրական ժամանակաշրջանում ընդդիմության հետ կապված գործիչների և որոշ ռուս փորձագետների պնդումները, որ դա «Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության» կամ «հայ-ռուսական հարաբերությունների քայքայման» գինն է:[9] Ընդհանուր առմամբ, թե ՀՀ-ԵՄ համագործակցությունը, թե արևմտյան այլ գործընկերների հետ համագործակցությունը՝ դրա տարբեր դրսևորումներով, հանդիսանում է շարունակական քարոզչության թիրախ:
Դրա հետ մեկտեղ, արդեն 2022 թ. Ռ. Քոչարյանը ՌԴ-ի հետ միութենական պետության կազմում լինելը ներկայացրել է որպես «տարածաշրջանում գործոն լինելու լուծումներից մեկը»:[10] Կարելի է հիշատակել նաև գործարար Ռուբեն Վարդանյանի «Կենտրոն» հեռուստաընկերությանը տրված հարցազրույցում արված ենթադրությունը՝ միութենական պետության ստեղծման անխուսափելիության մասին, որից բխում է «Թաթարստանի պես ամենահաջողված ռեգիոն» դառնալու նպատակադրումը,[11] ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովի՝ Ռուսաստան-Արևմուտք առճակատման խնդրի շահարկումը և հայտարարությունը, որ «Ռուսաստանի հետ դաշինքն այլընտրանք չունի»,[12] կամ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանի մանիպուլյատիվ, կեղծ երկընտրանքի վրա հիմնված պնդումը. «Ավելի լավ է Ռուսաստանի հետ միութենական պետություն ստեղծել, քան Թուրքիայի»:[13]

Բացի այդ, հետպատերազմյան շրջանում՝ մասնավորապես 2022 թ. գարնանը տեղի ունեցած «Դիմադրության» շարժման ցույցերի ընթացքում, կրկնվել է կոռուպցիայի դրական ազդեցության մասին միտքը. ըստ դրա՝ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի կառավարման օրոք

[9] Բարսեղյան Ա., Ինչի՞ համար է ԵՄ-ից 2.6 միլիարդ եվրոն գալիս Հայաստան, media.am, 16.09.2021, https://media.am/hy/verified/2021/09/16/29518/
[10] Գևորգ Թոսունյան, Գործոն դառնալու լուծումներից մեկը կարող է լինել միութենական պետության ձևավորումը. Քոչարյան, Սիվիլնեթ, 17.02.2022, https://www.civilnet.am/news/650356/գործոն-դառնալու-լուծումներից-մեկը-կարող-է-լինել-միութենական-պետության-ձևավորումը-քոչարյան/
[11] Եթե միութենական պետության ստեղծումն անխուսափելի դառնա, ի՞նչ պետք է անենք, որ Թաթարստանի պես հաջողված ռեգիոն լինենք, ոչ թե ՌԴ կազմի այլ, աղքատ ռեգիոնների պես. Ռուբեն Վարդանյան, tert.am, 15.03.2022, https://www.tert.am/am/news/2022/03/15/ruben-vardanyan/3777539
[12] Է. Շարմազանովի ֆեյսբուքյան գրառումը, 18.03.2022, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=503347774488861&id=100044409284560
[13] Ավելի լավ է Ռուսաստանի հետ միութենական պետություն ստեղծել, քան Թուրքիայի. Արամ Վարդևանյան, 22.03.2022, https://www.youtube.com/watch?v=SiRrPTHNbh8

կոռուպցիան որոշակի առումով անգամ նպաստել էր բանակի մարտունակությանը, հետևաբար նաև՝ անվտանգության ապահովմանը: Հատկանշական է նաև քրեական ենթամշակույթին բնորոշ «հասկացողություններով ապրելու» նկատմամբ ՀՅԴ որոշ ներկայացուցիչների դրական վերաբերմունքը՝ դեռևս 2012 թ. «DIY» ակումբը հրկիզելու և այլ դեպքերի կապակցությամբ, այնուհետև՝ սկսած 2018-ից, «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Գևորգ Պետրոսյանի, «Աղեկվադ» և որոշ այլ խմբավորումների պահվածքը և քարոզչությունը, և դարձյալ «Դիմադրության» շարժման որոշ ներկայացուցիչների ակներևաբար դրական վերաբերմունքը նշված արժեհամակարգի նկատմամբ:

Այս համատեքստում կարելի է նշել, որ դեռևս 2015 թ. ռուսաստանյան մշակութային սոցիոլոգ Դանիիլ Դոնդուրեյը Media.am-ի հետ հարցազրույցում մասնավորապես նշել էր, որ ռուսական լրատվամիջոցների կողմից տարվող քարոզչությունն ամրագրում է կոռուպցիան հանդուրժող մշակույթ, վարում է քրեական բարքերի ու «հասկացողություններով ապրելու» քարոզ, աղավաղում է բառերի իմաստային նշանակությունը՝ ներմուծելով «լիբերալ ֆաշիստներ» ու նմանատիպ արտահայտություններ, Երկրորդ աշխարհամարտի համատեքստում կենտրոնանում է հաղթանակի վրա՝ զոհերին ու տառապանքները թողնելով ստվերում, և առհասարակ, մարդկանց ներշնչում է, որ պատերազմն այնքան էլ վատ բան չէ:[14]

Որոշ փորձագետների կարծիքով, վերջին տարիներին ժողովրդավարական արժեքները և քաղաքացիական հասարակությանը վարկաբեկելուն նպատակաուղղված քարոզչությունն ուժեղացել է՝ հատկապես 2020-ից՝ պայմանավորված համավարակով և պատերազմով, ընդ որում, նկատելի է նմանատիպ քարոզչությունում ներգրավվածների քանակի աճ՝ նաև սոցիալական ցանցերի ընձեռած հնարավորությունների շնորհիվ: Բացի այդ, այդ քարոզչության գործում ակտիվորեն ներգրավված են միջազգային իրադարձությունները ռուսական աղբյուրներին հղում կատարելով լուսաբանող հայկական լրատվամիջոցները և ռուսաստանաբնակ հայերը:[15]

Սույն հետազոտության շրջանակում մեդիափորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների շրջանում կատարված հարցման մասնակիցները ևս հաճախակի հիշատակել են արժեհամակարգի հետ կապված խնդիրների շահարկումը քարոզչության նպատակով՝ մասնավորապես, պատասխանելով վերջին չորս տարիներին աչքի ընկնող հակաժողովրդավարական խոսույթների մասին հարցին:

Ամփոփելով՝ կարելի է նաև նշել, որ բացի վերը նշված՝ քաղաքական նպատակներով նախընտրական շրջանում կամ «Դիմադրության» շարժման ցույցերի ընթացքում շահարկվող պնդումներից, առկա են այլ օրինակներ ևս. 2019 թ. դեկտեմբերի 20-ին կրթության բարեփոխման նախագծի վերաբերյալ խորհրդարանական լսումների ժամանակ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Նաիրա Զոհրաբյանի կողմից այսպես կոչված «Դալեսի պլանից» մեջբերում կատարելը, «գունավոր հեղափոխությունների»՝ ԱՄՆ պետդեպարտամենտի կամ ԿՀՎ-ի կողմից կազմակերպված լինելու մասին պարբերաբար կատարվող պնդումները, և այլն: Ընդհանուր առմամբ, կարելի է վերահաստատել նախկինում հնչեցված դրույթը, որ Հայաստանում հակաժողովրդավարական, իսկ որպես դրա մասնավոր

[14] Հախվերդյան Ն., «Հեռուստատեսությանը խելացի մարդիկ պետք չեն», media.am, 30.10.2015, https://media.am/hy/viewpoint/2015/10/30/5563/

[15] Grigoryan A., 'Armenia' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 37-38, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf

դեպք՝ հակաարևմտյան, քարոզչության խոսույթները մեծ մասամբ եղել և մնում են «ներմուծված»՝ սկիզբ առնելով Ռուսաստանում:[16]

Հանրային քաղաքականության դաշտում խնդրահարույց դրսևորումների խնդիրը

Միայն արտաքին ավտորիտար միջավայրի ազդեցությանն անդրադարձը թերևս, թերի կլիներ՝ առանց հաշվի առնելու ժողովրդավարության և քաղաքացիական ազատությունների հետընթացի հնարավորությունը՝ պայմանավորված ներքին քաղաքականության որոշ առանձնահատկություններով: Ավտորիտարիզմի որոշ դրսևորումներ կարող են ի հայտ գալ նաև Հայաստանի գործող իշխանության չկշռադատված, իրավիճակային լուծումներին նպատակաուղղված գործողությունների արդյունքում, և դրանց կարգավորման առումով առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում թե՛ լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների սկզբունքային դիրքորոշումը, թե՛ հետադարձ կապի առկայությունը, որի շնորհիվ իշխանությունը ստիպված է լինում արձագանքել իրեն ուղղված քննադատությանը և կատարել որոշ քայլեր՝ իրավիճակը շտկելու համար:

Որպես օրինակ կարելի է հիշատակել 2021 թ. օգոստոսի 30-ին ուժի մեջ մտած օրենքով ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելը: Համապատասխան օրենսդրական փոփոխության նախագիծն ի սկզբանե հակասություն էր առաջացրել՝ արժանանալով քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների քննադատությանը: Freedom House[17] և Amnesty International[18] միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև հայաստանյան փորձագետների կարծիքով,[19] նման օրենքների ընդունումը ժողովրդավարության և խոսքի ազատության հետընթացի վկայություն էր: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մասին բանաձևում, ի թիվս այլ խնդիրների, առաջարկվել է վերանայել տվյալ օրենսդրական դրույթը: Օրենքի անհամապատասխանությունը Եվրախորհրդի անդամ պետությունների կողմից ստանձնած պարտավորություններին և նորմատիվ արժեքներին մատնանշվել էր նաև ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինի կողմից:[20] Չնայած տարբեր պաշտոնյաների, այդ թվում՝ ԱԺ Պետահիրավական հանձնաժողովի ղեկավար Վլադիմիր Վարդանյանի[21] և Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի կողմից,[22] հնչեցվել են նման օրենսդրական նորմի անհրաժեշտության հիմնավորումներ, ի վերջո տեղի ունեցավ ապաքրեականացում՝ քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների հետևողական պահանջներին համապատասխան:

---

[16] Բուն TV, Եվրոպական կառույցների հետ համագործակցությունը՝ քարոզչության թիրախ, 30.04.2022, http://boon.am/the-cooperation-with-european-bodies-as-a-target-for-propaganda-armen-grigoryan/

[17] Սարիբեկյան Գ., Freedom House-ը ահազանգում է Հայաստանում ժողովրդավարության եւ խոսքի ազատության հետընթացի մասին, azatutyun.am, 29.07.2021, https://www.azatutyun.am/a/31484157.html

[18] Հարությունյան Ս., Հայաստանում խոսքի ազատությունը շարունակում է սահմանափակված մնալ. Amnesty International, azatutyun.am, 29.03.2022, https://www.azatutyun.am/a/31775802.html

[19] Անանյան Ռ., ՀՀ-ի վարկանիշը փչացնող օրենքներ են ընդունվում՝ ավտորիտար որոշումներ են հիշեցնում. սա անընդունելի՛ է. Աշոտ Մելիքյան, Ֆակտոր.ամ, 30.03.2022, https://factor.am/493583.html

[20] Գևորգյան Ս., Վիրավորանքի քրեականացումը կարող է լուրջ ազդեցություն ունենալ ազատ արտահայտման իրավունքի վրա. ԵՄ դեսպան, azatutyun.am, 23.03.2022, https://www.azatutyun.am/a/31766534.html

[21] Մկրտչյան Ա., Իշխանությունը կրկին պնդում է՝ ծանր վիրավորանքը քրեականացնելու օրենքը զսպող դեր ունի, azatutyun.am, 07.02.2022, https://www.azatutyun.am/a/31691137.html

[22] Գլխավոր դատախազը ԵՄ պատվիրակության ղեկավարին ներկայացրել է ծանր վիրավորանքի քրեականացման անհրաժեշտությունը, azatutyun.am, 03.03.2022, https://www.azatutyun.am/a/31734431.html

Կարելի է նշել, որ սույն հետազոտության շրջանակում 2022 թ. տարեսկզբին իրականացված հարցազրույցների որոշ մասնակիցներ, որոնք նախընտրել են անանուն մեջբերմամբ հիշատակումը, ևս նշել են, որ քրեականացումն անհրաժեշտություն էր՝ մասնավորապես 44-օրյա պատերազմին հաջորդած և 2021 թ. արտահերթ ընտրությունների ժամանակահատվածում առաջացած ներքաղաքական լարվածության պայմաններում: Ատելության խոսքի և հայհոյանքների օգտագործումն իսկապես խիստ տարածված էր դարձել:[23] Սակայն քրեականացման անհրաժեշտությունը դրանով պայմանավորելը, ինչպես և պաշտոնյաների վերը մեջբերված հիմնավորումները, ընդգծում են ժողովրդավարական չափանիշների և ստանձնած միջազգային պարտավորությունների տեսանկյունից խնդրահարույց իրավիճակային լուծումներն արդարացված համարելու հակվածությունը:
Հանրային քաղաքականության մշակման համատեքստում հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման հրամայականին անդրադառնալիս նպատակահարմար է նաև հիշատակել բարձր տեխնոլոգիաների՝ մասնավորապես թվայնացման հետ կապված խնդիրը:
Նախ, կարելի է նշել հանրության լայն շերտերին, հավանաբար, պակաս հայտնի մի օրինակ: Դեռևս 2011 թ. «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոնին» հանձնարարվել էր ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության հետ համատեղ մշակել «Անվտանգ քաղաք» հայեցակարգը: 2017 թ. սկսվել էին բանակցությունները չինական «Huawei» ընկերության հետ՝ հնարավոր տեխնոլոգիական լուծումների վերաբերյալ. դրանցում, մասնավորապես, կարող էր ներառվել արհեստական բանականության միջոցով մարդկանց դեմքերի տարբերակման համակարգ: 2019-ին խնդիրը հիշատակվել էր «Eurasianet»-ի հրապարակման մեջ, և որոշ ժամանակ անց Երևանի քաղաքապետարանից հայտնեցին, որ բանակցությունները դադարեցվել են: Սրան ժամանակին անդրադարձել էր Freedom House-ը՝ «Freedom on the Net 2020» զեկույցում:[24]
Առավել հայտնի օրինակներից է 2020 թ. մարտի 31-ին Ազգային ժողովի կողմից հապճեպորեն ընդունված «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթը, որով թույլ տրվեց տեղեկություններ հավաքել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվողների գտնվելու վայրի և շփումների մասին: Անվերահսկելի, անձնական տվյալների մշակման սկզբունքների հետ անհամատեղելի լինելու պատճառով փորձագետների և քաղաքացիական հասարակության կողմից քննադատության արժանացած[25] տեղորոշման համակարգի կիրառումն ի վերջո մի քանի ամիս անց դադարեցվեց: Ամեն դեպքում, նման ոճով օրենսդրական փոփոխությունների ընդունման փաստն ինքնըստինքյան խնդրահարույց է:

---

[23] Սրա մասին ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Գրիգորյան, Ա., և Հովհաննիսյան, Զ. (խմբ.) (2021) *Արտահերթ խորհրդարանական ընտրություններ 2021. նախընտրական ծրագրերի և քարոզչության վերլուծություն:* [Առցանց]: Երևան. Քաղաքականության հետազոտական կենտրոն: https://centreforpolicystudies.org/gallery/elections2021.pdf, և Վարդանյան, Է. (2022) *Ծայրահեղ աջ պոպուլիստական հռետորաբանությունը հայաստանյան հակաժողովրդավարական դիսկուրսում:* [Առցանց]: https://www.osf.am/wp-content/uploads/2022/05/Ծայրահեղ-աջ-պոպուլիստական-հռետորաբանությունը-հայաստանյան-հակաժողովրդավարական-դիսկուրսում.pdf:
[24] Freedom House, Freedom on the Net 2020, https://freedomhouse.org/sites/default/files/2020-10/10122020_FOTN2020_Complete_Report_FINAL.pdf
[25] Կարապետյան Ա., Տեղորոշման համակարգ. մտահոգություններ անձնական տվյալների արդյունավետ և անվտանգ մշակման շուրջ, EVN Report, 04.07.2020, https://evnreport.com/arm/politics-arm/efficiency-flaws-and-potential-dangers-of-phone-tracking-2/

Այս համատեքստում դարձյալ ի հայտ է գալիս ավտորիտար արտաքին միջավայրի խնդիրը, քանի որ անհնար է հաշվի չառնել Չինաստանում նմանատիպ տեխնոլոգիաների վրա հիմնված «սոցիալական ռեյտինգի»[26] անհամատեղելիությունը հիմնարար իրավունքների և ազատությունների հետ, կամ Ռուսաստանում դրանց կիրառումը՝ հատկապես ընդդիմադիրներին ճնշելու նպատակով:

Միևնույն ժամանակ, կարելի է նշել, որ հետադարձ կապը միշտ չէ, որ արդյունավետ է գտնվում: Դատական համակարգի բարեփոխումները ձգձգելը, 2020 թ. Սահմանադրական դատարանի երեք անդամների նշանակումը, որը մասնավորապես ուղեկցվել էր վարչապետ Ն. Փաշինյանի՝ քննադատներին ուղղված հեգնական արտահայտություններով՝ «մարդիկ, ովքեր հեղափոխության մասին իմացել են մայիսի 8-ից մի շաբաթ հետո» և այլն,[27] մի շարք այլ կարևոր ոլորտներում առկա բացթողումները դրա օրինակներից են: Հենց վերջերս տեղի ունեցած իրադարձություններից կարելի է մատնանշել 2022 թ. հուլիսի 1-ից խոշոր գործարքները միայն անկանխիկ եղանակով կատարելու մասին օրենքը, որն ընդունվել է առանց պատշաճ հանրային քննարկումների, հանգեցնում է ՀԴՄ սարքերի սպասարկման թանկացմանը և, ենթադրաբար, լրացուցիչ շահույթ կապահովի բանկերի համար՝ առանց սպառողների և փոքր բիզնեսի շահերը հաշվի առնելու:[28] Այս շարքում կարող է հիշատակվել նաև 2022 թ. հունիսին Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ԱԺ պատգամավոր Վահագն Հովակիմյանի կողմից ներկայացված նախագիծը, որը մի շարք հասարակական կազմակերպություններ խնդրահարույց են համարում:[29]

Այսպիսով, ակնհայտ է մամուլի, իրավապաշտպանների և ընդհանուր առմամբ՝ քաղաքացիական հասարակության, ակտիվ դերակատարման և հետադարձ կապի կարևորությունը՝ ավտորիտար բնույթ ունեցող կամ առերևույթ խմբային շահեր սպասարկող հանրային քաղաքականության իրականացումը կանխելու առումով: Մասնավորապես, քանի որ թվայնացման գործընթացները շարունակելու են զարգանալ, պետք է հստակ սահմանագիծ անցկացնել հանրային ծառայությունների կամ սպասարկման ոլորտում կիրառվող լուծումների և հիմնարար իրավունքների ու ազատությունների ոտնահարման պոտենցիալ ունեցող համապարփակ համակարգերի ստեղծման միջև:

Ապատեղեկատվության և մանիպուլյացիաների դեմ նպատակաուղղված գործողությունները

2020 թ. ընդունված ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության «Բաց և անվտանգ տեղեկատվական և կիբեռտիրույթների ապահովում» հատվածում, մասնավորապես, նշված է. «Ժամանակակից աշխարհում ավելի սուր դրսևորումներ են ստանում տեղեկատվական պատերազմները, որոնք ներառում են քարոզչության, մանիպուլյացիաների, կեղծ լուրերի և

[26] «Սոցիալական ռեյտինգի» համակարգը փոխկապակցված է դեմքերի տարբերակման համակարգ, տվյալների մեծ զանգվածի (big data) մշակում և արհեստական բանականություն ներառող «Սքայնեթ» համակարգի հետ: Ենթադրվում է, որ հարկերի և այլ պարտադիր վճարների, հասարակական կարգի պահպանման, «ավանդական արժեքների» պահպանման, կամավորական գործունեության և այլ խրախուսվող արարքների հիման վրա հաշվարկվող դրական ռեյտինգն առավելություններ է ապահովում՝ առաջխաղացման և այլ հնարավորություններով՝ անձնական տվյալների գաղտնիության հաշվին, իսկ բացասականը կարող է հանգեցնել տարբեր խնդիրների:

[27] Սահմանադրական դատարանի շուրջ ճգնաժամը վերջացել է. Նիկոլ Փաշինյան, azatutyun.am, 16.09.2020, https://www.azatutyun.am/a/30842162.html

[28] Ավետյան Ա., Բանկերը պատրաստվում են հուլիսի 1-ից գերշահույթ ստանալ, Ալիք մեդիա, 29.06.2022, https://www.aliqmedia.am/2022/06/29/70400/

[29] Հայտարարություն Ընտրական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ, 23.06.2022, https://uic.am/15975

ապատեղեկատվության գործիքակազմ և հաճախ թիրախավորում են ժողովրդավարական արժեքները: ... Առաջնային մարտահրավերներից է տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտը կարգավորող համապարփակ պետական քաղաքականության անկատարությունը»:[30] Չնայած դրան, պետական մարմինների գործունեության արդյունավետությունն այս ոլորտում բավական սահմանափակ է, և 2018 թ. ի վեր առաջընթաց չի գրանցվել՝ ձևակերպված գործողությունների պլանի, հստակ մշակված քաղաքականության և հաղորդակցման ռազմավարության բացակայության պայմաններում: Այնուամենայնիվ, որոշ չափով առկա է մասնագիտական կառույցների և քաղաքացիական հասարակության հետ ոլորտային համագործակցություն. որոշ օրինակներ նշված են ստորև: Այս համատեքստում պետք է նաև հաշվի առնել, որ ավտորիտար արտաքին միջավայրից սկիզբ առնող ապատեղեկատվության որոշ դրսևորումներ ոչ թե ուղղված են հայաստանյան ներքին լսարանին, այլ Հայաստանի վարած արտաքին քաղաքականությունն ու ղարաբաղյան հակամարտությունն աղավաղված կերպով ներկայացնելու նպատակ ունեն: Նախկինում Ադրբեջանի և նրա դաշնակիցների կամ համագործակցողների այսօրինակ գործունեությունն արդեն բավական արդյունավետորեն հանգեցրել էր հակամարտության բնույթի մասին թյուր պատկերացումներին՝ մասնավորապես այն հետխորհրդային երկրներում, որոնց տարածքների մի մասը զավթված է Ռուսաստանի կողմից: Այժմ այսօրինակ քարոզչությունը նպատակաուղղված է, մասնավորապես, Ադրբեջանը կառուցողական, խաղաղության հաստատմանը պատրաստ կողմ և, միաժամանակ, ագրեսիայի զոհ ներկայացնելուն՝ վերջին հանգամանքն օգտագործելով Հայաստանին զենք մատակարարելու անթույլատրելիության մասին պնդումները հիմնավորելու համար, ինչպես նաև ռուս-ուկրաինական պատերազմի դեպքում Հայաստանի չեզոք կեցվածքը վարկաբեկելուն:

Ապատեղեկատվության և մանիպուլյացիաների դեմ նպատակաուղղված՝ մասնագիտական կառույցների և քաղաքացիական հասարակության գործունեության օրինակներ

Ինչ վերաբերվում է մասնագիտական կառույցների և քաղաքացիական հասարակության գործունեությանը՝ հանրային իրազեկման, ինչպես նաև մեդիագրագիտության և քննադատական մտածողության զարգացման առումով, այն գուցե որոշ չափով արդյունավետ է: Սակայն խնդրի ծավալը, նյութական ռեսուրսների պակասը, լսարանի որոշ հատվածների հետ արդյունավետ հաղորդակցվելու հնարավորությունների սահմանափակությունը, և որոշ այլ հանգամանքներ նվազեցնում են արդյունավետության աստիճանը:

Մասնավորապես, կարելի է նշել «ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկումն ու ջատագովությունը՝ հանուն Հայաստանում վստահելի և համակարգային բարեփոխումների» ծրագիրը:[31] Դրա շրջանակում մի շարք հասարակական կազմակերպությունների աշխատանքը ներառում է նաև հանրային իրազեկմանը նպատակաուղղված միջոցառումներ Հայաստանի մարզերում:

[30] ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն, 2020, 31, https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

[31] ՀՀ – ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի քաղաքացիական հասարակության համատեղ մշտադիտարկման զեկույց-2021, 09.04.2022, https://hcav.am/cepa-2021/

Տպագիր ու առցանց լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի շարունակական դիտարկումներ է իրականացնում,[32] ինչպես նաև Կենտրոնական Եվրոպայի երկրների փորձի վրա հիմնված մեդիագրագիտության դասընթացներ է կազմակերպում Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Կենտրոնի կողմից նաև 2017 թ. ի վեր կազմակերպվում է ամենամյա Մեդիագրագիտության կրթական շաբաթը: 2013-ին լույս տեսավ Կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված «Մեդիագրագիտություն» ուսուցչի ձեռնարկը՝ առաջին հայալեզու ուղեցույցը դասավանդողների համար, որի հիման վրա վերապատրաստվել են մի շարք դասավանդողներ և մշակվել են դասընթացներ: 2017-ին Կրթության և գիտության նախարարությունը կենտրոնի հետ հուշագիր ստորագրեց:[33]
Քննադատական մտածողության և մեդիագրագիտության պարբերական դասընթացներ են կազմակերպում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Հանրային լրագրության կենտրոնը, «Հոդված 3» ակումբը: Որոշ նախագծեր իրականացվել են նաև «Ազատ քաղաքացի» քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոնի, Քաղաքականության հետազոտական կենտրոնի և այլ կառույցների կողմից:
Ակտիվ աշխատանք է իրականացնում Իրազեկ քաղաքացիների միավորման Փաստերի ստուգման հարթակը: Այն, մասնավորապես, պարբերաբար ստուգում է քաղաքական, իրավական, տնտեսական և այլ ոլորտների մասին հրապարակվող շատ նյութերի իսկությանը համապատասխանելը, կամ կեղծ կամ մանիպուլյատիվ լինելը: Այդ նպատակով հետևում են հայաստանյան լրատվամիջոցներին, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների կողմից ստեղծվածներին, ինչպես նաև Ռուսաստանի կառավարության կողմից ստեղծված կամ էլ Ռուսաստանի հետ կապեր ունեցող լրատվամիջոցներին:[34] Լրատվամիջոցների մշտադիտարկման՝ մասնավորապես թափանցիկության և էթիկայի չափանիշների առումով, կարելի է առանձնացնել նաև «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի աշխատանքը:[35]
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի կատարած ապատեղեկատվության վերլուծությունից և մեթոդական ձեռնարկների հրապարակումից բացի, ուշագրավ է նաև CyberHUB-AM նախագիծը, որի նպատակն է աջակցել հասարակական կազմակերպություններին, իրավապաշտպաններին, ակտիվիստներին, լրագրողներին և անկախ լրատվամիջոցներին՝ կիբեռանվտանգության ապահովման նպատակով:[36]

Որոշ եվրոպական երկրների փորձը

Նախքան այս հատվածում ժողովրդավարական արժեքների պաշտպանությանն անդրադառնալը, դիտարկենք հակառակ օրինակը՝ ավտորիտարիզմը ԵՄ ներմուծելու, թերևս, «ամենահաջողված» փորձը: Ավտորիտար արտաքին միջավայրը գիտակցաբար ներմուծելու կամ մասամբ ընդօրինակելու եղանակները և պատճառները հասկանալը կարող է օգտակար լինել թե որոշ քարոզչական խոսույթների միջազգային ասպարեզում տարածման բնույթը, թե հակազդեցության հնարավոր տարբերակները գնահատելու տեսանկյունից:

Հունգարիայի «իլլիբերալ ժողովրդավարությունը»

---

[32] Տե՛ս, օրինակ, «Ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները հայաստանյան առցանց մեդիայում», Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 12.03.2021, https://media.am/hy/lab/2021/03/12/26664/
[33] https://mediainitiatives.am/medialiteracy-2/
[34] Փաստերի ստուգման հարթակ (FIP). Մեթոդաբանություն, https://fip.am/methodology
[35] https://www.regioncenter.info/hy/researches
[36] ԲՏԻ նախաձեռնությամբ մեկնարկել է CyberHUB-AM նախագիծը, 03.10.2019, https://mdi.am/archives/542

Կարելի է նշել, որ եվրոպական տարբեր երկրներում կան Արևմուտքին ենթադրյալ բարոյական անկման՝ այդ թվում նյութապաշտության, միասեռականության և «ավանդական արժեքներից» հեռանալու համար քննադատող, եվրոպական և եվրոատլանտյան կառույցների նկատմամբ թերահավատորեն տրամադրված, ավտորիտար տերությունների հետ հարաբերություններին նախապատվություն տվող կուսակցություններ: Դրանց հռետորաբանությունը ներառում է քարոզչական թեզն, ըստ որի Ռուսաստանը եզակի հոգևոր արժեքների, քրիստոնեական արժեքների և ավանդական ընտանիքի պահապան է:[37]: Հունգարիան, սակայն, հանդիսանում է ԵՄ անդամ երկրի օրինակ, որտեղ իշխող ուժը, մի կողմից, օգտվում է սուբսիդիաներից, որոնց հատկացումը ներկայացվում է որպես ԵՄ-ի պարտականություն, և օրենքի գերակայության խախտման պատճառով դրանց հնարավոր սառեցումը հանգեցնում է շարունակական շանտաժի՝ մասնավորապես, ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների հերթական փաթեթը չհաստատելու միջոցով՝ մինչ շահեկան զիջումներ կորզելը, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանում և Թուրքիայում վարվող քաղաքականության նմանությամբ որոշ տարրերի ներդրմամբ «իլլիբերալ ժողովրդավարության» մոդելի առաջխաղացումը դարձել է պատրվակ՝ իշխանության ճյուղերի տարանջատումը խախտելու, սեփականության վերաբաշխման, կարծիքների բազմազանության սահմանափակման, մեդիա ռեսուրսների կենտրոնացման համար՝ անգամ ընտրակեղծիքների միջոցով: «Իլլիբերալ ժողովրդավարություն» եզրույթը Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի կողմից ներդրվեց 2010 թ. ընտրություններում բացարձակ մեծամասնություն ստանալուն հետևած շարունակական վերաձևումների ընթացքում: Դրանք ներառում էին սահմանադրության փոփոխությունը, դրան զուգահեռաբար՝ սահմանադրական դատարանը, դատական համակարգը, կենտրոնական բանկը, աուդիտի պետական ծառայությունը, ազգային հարկային խորհուրդը, դատախազությունը, լրատվական ոլորտը կարգավորող և այլ պետական հաստատությունները յուրայինների վերահսկողության տակ դնելը, բիզնես ոլորտի նկատմամբ վերահսկողությունը և այլ միջոցներ:[38] Միևնույն ժամանակ, առաջխաղացվել է ինքնության քաղաքականության հետ սերտորեն փոխկապակցված գաղափարախոսություն, ըստ որի՝ Հունգարիան ժողովրդավարական պետություն է, քանի որ իշխանությունը ձևավորվում է ընտրությունների միջոցով, սակայն այն պետք է հիմնված լինի ազգային և ընտանեկան արժեքների վրա՝ մերժելով «վերազգային լիբերալ և ձախ էլիտայի» «ապազգային» արժեհամակարգը և չենթարկվելով «Բրյուսելի դիկտատին»:

Դա զուգորդվում է ոչ միայն Բաց հասարակության հիմնադրամի գործունեությունն արգելելով, այլև ինքնության քաղաքականության դրսևորումներով՝ օրինակ, ներգաղթյալների դեմ քարոզչությամբ կամ գենդերային հետազոտությունների դասավանդումն արգելելով,[39] հանրային և իշխանամետ լրատվամիջոցների կողմից օտարերկրյա սկզբնաղբյուրներ ունեցող ապատեղեկատվության տարածմամբ և Ռուսաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Չինաստանի ու այլ ավտորիտար պետությունների

[37] Krekó P., Győri L., Dunajeva J. et al, *The Weaponization of Culture: Kremlin's traditional agenda and the export of values to Central Europe*, Political Capital Institute, 2016, https://www.politicalcapital.hu/wp-content/uploads/PC_reactionary_values_CEE_20160727.pdf

[38] Գրիգորյան Ա., Պետության զավթում՝ սահմանադրությամբ. հունգարական և հայկական զուգահեռներ, ՄԱՀՀԻ հետազոտություն, 04.12.2019, https://www.aravot.am/2019/12/04/1081447/

[39] Verseck K., Hungary's university ban on gender studies heats up culture war, Deutsche Welle, 18.10.2018, https://www.dw.com/en/hungarys-university-ban-on-gender-studies-heats-up-culture-war/a-45944422

հետ համագործակցության գովաբանմամբ՝ ի հակադրություն «բարոյազուրկ» Արևմուտքի,[40] հետաքննող լրագրողներին, մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցները չինական քարոզչության տարածման նպատակով օգտագործումը հետաքննողներին հետևելը՝ «Pegasus» բջջային հավելվածի միջոցով,[41] և այլն: Այդօրինակ քաղաքականության արդյունքում Հունգարիայի վարկանիշը «Freedom House»-ի կողմից իջեցվել է, և 2020 թ. սկսած այն համարվում է անցումային կամ «հիբրիդային» վարչակարգ ունեցող երկիր:
Վարվող տեղեկատվական քաղաքականության վերջերս տեսանելի դրսևորումներից կարող է հիշատակվել Ուկրաինայում ընթացող պատերազմի համատեքստում լրատվական դաշտում գերիշխող դիրք զբաղեցնող իշխանամետ կառույցների ներկայացուցիչների և փորձագետների կողմից ռուսական քարոզչության թեզերի օգտագործումը,[42] ինչպես նաև դրանց և այլ ապատեղեկատվության կիրառումը 2022 թ. ապրիլին կայացած խորհրդարանական ընտրություններին նախորդած քարոզչությունում, որի ընթացքում ներգրավվել էին պետության ռեսուրսները, «գոնգոները»՝ գործող իշխանության շահերը սպասարկող կեղծ քաղաքացիական հասարակության կառույցները, և ավանդական, ինչպես նաև անանուն ու բացահայտորեն կողմնակալ (այսպես կոչված «grey zone») լրատվամիջոցները.[43] վերջիններս նաև լայնորեն տարածել են սոցցանցերի միջոցով ներդրված քարոզչական նյութերը (այս հնարքը լայնորեն կիրառվում է նաև Հայաստանում՝ թե էլեկտրոնային, թե այլ լրատվամիջոցների կողմից):

Իրավիճակը որոշ այլ արևելաեվրոպական երկրներում

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի պետական մարմինների ռազմավարական հաղորդակցության ունակությունները և ապատեղեկատվությանը հակազդելուն նպատակաուղղված գործունեությունը թերի են և քիչ արդյունավետ, և այդ բացը միայն մասնակիորեն կարող է լրացվել քաղաքացիական հասարակության գործունեության շնորհիվ: Պետք է սակայն հաշվի առնել, որ համապատասխան մարտահրավերները համեմատաբար նոր են՝ վերջին տարիներին են ի հայտ եկել, և շատ այլ երկրներում՝ այդ թվում ԵՄ և ՆԱՏՕ-ի անդամ, հանրային քաղաքականության մակարդակում համապատասխան մեխանիզմներ դեռ ներդրված չեն, և քաղաքացիական հասարակության դերը մնում է կարևոր:
Օրինակ, Չեխիայում որպես հնարավոր լուծում առաջարկվել է ստեղծել հատուկ ինստիտուցիոնալ կառույց՝ վերլուծությունների իրականացման, մշտադիտարկման և գործողությունների համակարգման նպատակով, սակայն դեռևս 2016-ից կարգավորված չեն թվային տիրույթի կարգավորման մի շարք խնդիրներ, և այդ ուղղությամբ համակարգված քայլեր դեռ նոր են ձեռնարկվում: Առաջարկվել է նաև, որ ուսումնական ծրագրերում ներառվի

[40] Istrate D., 'Hungary' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 145, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf
[41] Panyi S., Szabó A., "A story like out of a spy movie," personal reports by two surveilled Direkt36 journalists, Direkt36, 03.08.2021, https://www.direkt36.hu/en/egy-kemfilmbe-illo-sztori-a-ket-megfigyelt-direkt36-os-ujsagiro-beszamoloja/
[42] Győri L., Putin's propagandists: How Russian information warfare succeeded in Hungary, VSquare, 17.03.2022, https://vsquare.org/putins-propagandists-how-russian-information-warfare-succeeded-in-hungary/
[43] Political Capital Institute, Disinformation in the election campaign – Hungary 2022, 10.05.2022, https://politicalcapital.hu/news.php?article_read=1&article_id=3004

մեդիագրագիտությունը, ինչպես նաև խորացվի քաղաքացիական կրթությունը և XX դարի պատմության դասավանդումը:[44]

Մինչ Չեխիայում հատուկ մասնագիտացված կառույցի ստեղծումը դեռևս քննարկման փուլում է, Լեհաստանում այն արդեն նախատեսված է 2020 թ. ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությամբ, սակայն դեռևս իրագործման փուլին չի հասել: Ենթադրվում է, որ պետք է ներդրվի ռազմավարական հաղորդակցության համապարփակ համակարգ՝ կանխատեսման, պլանավորման և իրագործման խնդիրներով զբաղվելու համար. այն պետք է ապահովի տեղեկատվական դաշտի պաշտպանություն երեք մակարդակներում՝ ֆիզիկական (ենթակառուցվածքների), ծրագրային ապահովման և հանրային ընկալումների: Վերջինիս հետ կապված ուշադրություն է դարձվում կրթության խնդիրներին՝ մասնավորապես տեղեկատվական անվտանգության դասընթացների և լրատվամիջոցների ու քաղաքացիական հասարակության հետ համագործակցության կազմակերպմանը:[45]

Սլովակիայում ևս կարևորվում է հասարակության տեղեկացվածության խնդիրը, որի լուծման նպատակով, բացի ռազմավարական հաղորդակցության համակարգ ստեղծելուց, առաջարկվում է զարգացնել առկա իրավիճակն ու պատմական համատեքստն ըմբռնելու ունակությունը: Ըստ այդմ՝ մեդիագրագիտությունը և խորացվի քաղաքացիական կրթությունը պետք է տեղ գտնեն ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլև պետք է ուշադրություն դարձվի ավագ սերնդի տեղեկացվածության բարելավմանը:[46]

Մոլդովան, ինչպես և Հայաստանը, դեռևս հեռու է ինստիտուցիոնալ լուծումներ ներդնելու փուլից, և քաղաքացիական հասարակության գործունեության կարևորությունը պահպանվում է: Փորձագետների մատնանշած խնդիրներից մեկն այն է, որ քաղաքացիական հասարակության կառույցների կենտրոնացումը մայրաքաղաք Քիշնևում երբեմն հանգեցնում է նրան, որ իրենց աշխատանքը ներգրավում է ավելի լավատեղյակ, արդեն իսկ խնդրի էությունը քիչ թե շատ բավարար կերպով ըմբռնող քաղաքացիներին՝ տեսադաշտից բաց թողնելով տարեցներին, գյուղական համայնքների բնակիչներին և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:[47] Կարելի է ենթադրել, որ նմանատիպ խնդիր գոնե մասամբ առկա է նաև Հայաստանում:

Միևնույն ժամանակ, կարելի է հաշվի առնել նաև հարևան Վրաստանի փորձը: Այնտեղ դեռևս 2018 թ. բոլոր նախարարություններում ստեղծվել են ռազմավարական հաղորդակցության բաժիններ, սակայն քաղաքական ուժեղ բևեռացումը հանգեցնում է նրան, որ պաշտոնյաները նախընտրում են հանդիպել առավելապես լոյալ կամ բարեկամաբար տրամադրված

---

[44] Havlíček P., 'Czechia' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 111, 118, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf

[45] Aleshka A., 'Poland' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 189-190, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf

[46] Jevčák M., Dubóczi P., 'Slovakia' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 222-224, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf

[47] WatchDog.MD Community, 'Moldova' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 174, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf

քաղաքացիների հետ, և կարող են խուսափել ընդդիմության մեծ ներկայացվածությամբ բնակավայրեր այցելելուց:[48]
Հաշվի առնելով, որ քաղաքական բևեռացումն ակնհայտ է նաև Հայաստանի քաղաքական կյանքում, սակայն առկա է շատ արևմտյան երկրներում ևս, կարելի է նշել, որ այդ բևեռացման, ինչպես նաև արմատական տրամադրությունների տարածման, ինքնության քաղաքականության և «մշակութային պատերազմի» վտանգներից մեկն այն է, որ մեծ մասամբ վերանում է ընդդիմախոսների հետ հաղորդակցվելու ցանկությունն, ինչի արդյունքում շատերն ընկալունակ են դառնում միայն իրենց կարծիքը վերահաստատող հրապարակումների և այլ տեղեկատվության նկատմամբ: Միևնույն ժամանակ, սոցիալական ցանցերը, որոնց բիզնես մոդելը հիմնված է «ընկերների» կամ «հետևորդների» խմբավորումներ ստեղծելու վրա, օգտվելով «big data»-ի հնարավորություններից, վատթարացնում են վիճակը՝ մարդկանց հրամցնելով այնպիսի տեղեկություններ, որոնք նրանց ենթադրաբար պետք է դուր գան, և էլ ավելի խորացնելով բևեռացումը:
Այս առումով բավական հատկանշական է նաև Լիտվայի հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի ղեկավար Ռիմանտաս Բագձևիչուսի հետևյալ միտքն ապատեղեկատվության և ատելության խոսքի դեմ վարվող կոշտ քաղաքականության վերաբերյալ. «Մենք շատ փոքր ազգ ենք, ու չենք կարող մեզ թույլ տալ ատելություն սերմանել միմյանց հանդեպ: Աջ ենք կամ ձախ, կաթոլիկ ենք կամ Եհովայի վկա, հյուսիսից ենք կամ հարավից, մեղք ենք գործել կամ «սուրբ» ենք՝ կապ չունի, երկրի ներսում իրար հետ լեզու պիտի գտնենք ու թույլ չտանք խաբել հասարակությանը: Այլընտրանք չունենք»:[49]
Կարելի է եզրակացնել, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հասարակության պատշաճ տեղեկացվածության խնդիրը դեռևս լուծված չէ՝ չնայած մասնավորապես ԵՄ անդամ երկրներում ինստիտուտների կայացման և ռեսուրսների հասանելիության առումներով Հայաստանի համեմատ ավելի շահեկան վիճակին: Որոշ երկրներում ընթացող զարգացումները կարող են շարունակաբար ուսումնասիրվել և հաշվի առնվել՝ Հայաստանում նույն ոլորտներում լուծումների հնարավորությունը դիտարկելիս: Միևնույն ժամանակ, հատկանշական է Հունգարիայի օրինակը, որտեղ օտարերկրյա ծագմամբ պրո-ավտորիտար խոսույթները շահարկվում են իշխանամերձ շրջանակների լրատվական դաշտի կողմից, իսկ զսպման և հակակշիռների մեխանիզմները՝ թե սահմանադրությամբ, թե միջազգային պարտավորություններով ամրագրված, փաստացի չեն գործում: Այս առումով պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել նմանատիպ խոսույթներ շահարկող շրջանակների գործունեությանը:

Ամփոփում

Ներկայումս անկայուն, դժվար կանխատեսելի միջազգային իրավիճակը նպաստում է թույլ, պակաս դիմակայուն հասարակություններում ավտորիտարիզմի տարածմանը և ժողովրդավարության հետընթացին՝ թե՛ արտաքին գործոնների, թե՛ շահագրգռված ներքին դերակատարների ազդեցությամբ: Ժողովրդավարական գործընթացների շարունակականությունն ապահովելը՝ հաշվի առնելով նաև հիմնարար իրավունքների

[48] Tughushi L., 'Georgia' in *Disinformation Resilience Index in Central and Eastern Europe in 2021*, eds. Pavel Havlíček and Andrei Yeliseyeu (Warsaw: EAST Center, 2021), 128-129, https://east-center.org/wp-content/uploads/2021/09/DRI-report-2021.pdf
[49] Տիգրան Հակոբյանի ֆեյսբուքյան էջ, 29.06.2022, https://www.facebook.com/tigran.hakobyan.31/posts/5266824170030413

պահպանման հրամայականը, հանգեցնում է ժողովրդավարությամբ շահագրգիռ դերակատարների հետևողականության, հակասությունները հաղթահարելու և համագործակցելու ունակության անհրաժեշտությանը. կարևոր է հանրային կառույցների, քաղաքացիական հասարակության, փորձագետների և լրատվամիջոցների ջանքերի համատեղումը: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության կողմից կառավարության գործունեությունն վերահսկելը և հօգուտ բարեփոխումների արդյունավետ ջատագովությունը մնում է կարևոր խնդիր:

Քաղաքականության առաջարկներ

- Հաշվի առնելով արտաքին գործոններով՝ այդ թվում ավտորիտար դերակատարների ուղղակի ազդեցությամբ պայմանավորված հանրային քաղաքականության որոշ դրսևորումների վտանգավորությունը, պետք է, նախ և առաջ, հաշվի առնել Freedom House-ի «Nations in Transit 2020» զեկույցում ներառված առաջարկը, որը կարող է ենթարկվել որոշակի լրացման. կառավարությանն անհրաժեշտ է հրաժարվել տեղեկություններ հավաքելու որոշ մեթոդներից՝ մասնավորապես հաշվի առնելով դրանցում կիրառվող տեխնոլոգիաները: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները պետք է մշտադիտարկում իրականացնեն՝ հետևելով քաղաքական, տնտեսական ու այլ վերնախավերի միջազգային կապերին, և մասնավորապես հետևելով ներդրումային ծրագրերի, ենթակառուցվածքային նախագծերի և փոխանցվող տեխնոլոգիաների բնույթին :[50]
- Նմանապես, անհրաժեշտ է ապահովել օրենսդրական նախագծերի հանրային քննարկումը՝ դրանք նեղ խմբային շահերին ծառայեցնելը հնարավորինս բացառելու համար: Իրենց հերթին, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները պետք է մշտադիտարկեն քննարկվող օրենսդրական նախագծերը և կառավարության ու այլ մարմինների գործունեությունը՝ աշխատելով ապահովել առավելագույնս արդյունավետ հանրային իրազեկում քաղաքական կամ տնտեսական խմբակային շահերով թելադրված որոշումների և դրանց հետևանքների մասին:
- Որոշ պետական մարմինների՝ մասնավորապես Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, օտարերկրյա գործընկերների հետ համագործակցության փորձն ընդլայնելու կարիք կա: Պետք է դիտարկել թե ներքին, թե օտարերկրյա ծագումով ապատեղեկատվության և քարոզչության վերլուծության և բացահայտման նպատակով համագործակցության խորացման հնարավորությունները՝ այդ թվում նաև միջազգային կառույցների և այլ երկրների գործընկերների հետ՝ միջազգային փորձագիտական համագործակցության զարգացման հեռանկարով:
- Դրա հետ մեկտեղ, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները պետք է հնարավորինս ընդլայնեն համագործակցությունը՝ տեղեկատվության փոխանակման և լավագույն փորձի օրինակների մասին տեղեկությունների տարածման նպատակով: Լրատվամիջոցները պետք է նաև հնարավորինս ընդլայնեն միջազգային համագործակցությունը՝ օգտագործելով վստահելի անվճար աղբյուրների նյութերը, ինչպես նաև համագործակցելով օտարերկրյա լրատվամիջոցների հետ՝ նյութերի փոխանակման, փաստերի ստուգման և այլ

[50] Freedom House, Nations in Transit 2020: Dropping the democratic façade, https://freedomhouse.org/sites/default/files/2020-04/05062020_FH_NIT2020_vfinal.pdf

նպատակներով, իսկ միջազգային կառույցների և հիմնադրամների օժանդակության առկայության դեպքում՝ նաև ձեռք բերելով որոշ նյութերի օգտագործման արտոնագրեր:

- Տեղեկատվական անվտանգության ամրապնդման նպատակով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, այլ շահագրգիռ պետական մարմինների և կրթական հաստատությունների կողմից առկա փորձի հիման վրա կարող է մշակվել մեդիագրագիտության դասընթացների մեթոդաբանություն՝ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար, ինչպես նաև ջատագովության ռազմավարություն՝ հաշվի առնելով նաև քաղաքացիական հասարակության ունեցած փորձը և կարողությունները:
- Հաշվի առնելով միջազգային հարթակներում Հայաստանի մասին ապատեղեկատվության հետ կապված իրավիճակը հաղթահարելու կարևորությունը, նպատակահարմար է, ի լրումն առկա դիվանագիտական ջանքերի, ստեղծել փորձագիտական համայնքի ներգրավման և նրա ներուժի օգտագործման մեխանիզմներ՝ հաշվի առնելով, մասնավորապես, թե միջազգային հարաբերությունների, թե կոնֆլիկտաբանության և այլ մասնագիտական ոլորտներում փորձը, թե ապատեղեկատվության և մանիպուլյացիաների դեմ նպատակաուղղված գործունեության փորձը, թե արտասահմանյան փորձագիտական շրջանակների և քաղաքացիական հասարակության հետ կապերի առկայությունը: Նման համագործակցությունը կարող է կազմակերպվել Արտաքին գործերի նախարարության հետ սերտորեն համագործակցող «ուղեղային կենտրոնի» կամ նմանատիպ հարթակի տեսքով: